ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐՄԵՆ ՋԻԳԱՐԽԱՆՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐՄԷՆ ՋԻԳԱՐԽԱՆԵԱՆ, ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹԻՒՆ

Սիրելի Յոբելեար.

Համայն արուեստասէր հասարակայնութիւնը Մայր Հայրենիքում եւ Ձեր երկրորդ, նոյնքան թանկ Հայրենիքը դարձած Ռուսաստանում երախտագիտութեամբ ու մեծարումով այսօր նշում է Ձեր՝ բեմարուեստի մեծ Վարպետիդ երախտարժան կեանքի 65-ամեայ յոբելեանը՝ սիրոյ ու յարգանքի իր փուրքը մատուցելով Ձեզ: Մենք, որպէս Ամենայն Հայոց Հայրապետ, ուրախ առիթն ունենք գնահատանքի արժանացնելու բազմարդիւն Ձեր վաստակը, որ ծառայում է Բարու արգասաւորմանը աշխարհում:

Աստծուց Ձեզ պարգեւած շնորհը Դուք անխոնջ մշակի նուիրումով անյոգնաբեկ ծառայեցրել էք բեմարուեստի վսեմ առաքելութեանը: Ձեր մարմնաւորած բազմաթիւ կերպարները հարստացրել են հայ եւ ռուս թատրոնն ու կինոն, ճշմարիտ արուեստի անդիմադրելի զօրութեամբ տարիներ ի վեր գերել հանդիսատեսի հոգին եւ առաջնորդել նրան դէպի այն բարձունքը, ուր ծնունդ է առնում համամարդկայինը, հաստատում հաւատը, յոյսն ու սէրը: Տարիներ շարունակ ապրելով ու ստեղծագործելով Մոսկուայում, Դուք արժանացաք համընդհանուր ճանաչման՝ միշտ մնալով հաւատարիմ զաւակը Ձեզ կեանք պարգեւած հինաւուրց ու փաղանդաշատ մեր սիրեցեալ ժողովրդի:

Սիրելի Նահապետ բեմարուեստի. համայն հայոց հաւատքի կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը, ջերմօրէն շնորհաւորում 65-ամեայ տարեդարձի առիթով: «Բազում են վարձք Ձեր» խորին գնահատանքով եւ ընդառաջ Նոր Նախիջեւանի ու Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի պաշտոնակատար, Սանկտ Պետերբուրգի հոգեւոր հովիւ, Հոգե-

շնորհ Տ. Եզրաս արեղայ Ներսիսեանի խնդրանքին, շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Մայր Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Տէրը Իր Ամենախնամ Աջի հովանու ներքոյ առողջ ու արեւշատ կեանքի երկար օրեր պարգեւի Ձեզ, ստեղծագործական նորանոր յաջողութիւններ ու երջանկութիւն:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ». ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 14-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2000 եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 26